

Արամնաձնության անոմալիաների փարածվածության վերլուծությունը Երևան քաղաքի երեխաների մոտ

Ն.Մ. Հովհաննիսյան

ՄՀերացու անվ. ԵՊԲՀ, ստոմատոլոգիական հիվանդությունների կանխարգելման և մանկական ստոմատոլոգիայի ամբիոն,

375025, Երևան, Կոռյունի 2

Բանալի բառեր. արամնաձնության անոմալիաներ, տարածվածություն, հաճախականություն

Արամնաձնության անոմալիաները (ԱՄԱ) բնութագրվում են մեծ տարածվածությամբ երեխաների ու դեռահասների ստոմատոլոգիական հիվանդացության կառուցվածքում, զբաղեցնելով առաջին տեղերից մեկը (կարիեսից և պարոդոնտի հիվանդություններից հետո): Այդ իսկ պատճառով ԱՄԱ-ների տարածվածության ուսումնասիրումը հանդիսանում է օրոքոդոնտիայի հրատապ խնդիրը [1]: Միևնույն ժամանակ արամնաձնության անոմալիաների տարածվածության ուսումնասիրման տվյալները մեծ ծառայություն կարող են մատուցել ինչպես կանխարգելիչ – կազմակերպչական աշխատանքների ծրագրի մշակման համար, այնպես էլ մասնագիտական բժշկական օգնության անհրաժեշտության հաշվարկման և կազմակերպման նկատառումներով:

Ըստ զբաղակառության տվյալների, ԱՄԱ-ները հանդիպում են Ռուսաստանի Դաշնությունում 33.2% հաճախականությամբ [2], Սառայան Արաբիայում՝ 62.4% [3], Ճապոնիայում՝ 40% (ըստ DAI ինդեքսի) [4]: ԱՄԱ-ների տարածվածության ուսումնասիրումը ունի որոշակի դժվարություններ՝ կապված կիրառվող մեթոդների բազմազանության հետ, ինչը թույլ չի տալիս համեմատել տարբեր տարածաշրջաններում կատարված հետազոտությունների արդյունքները: Ստացված տեղեկատվությունը չի կարելի հավաստի համարել այն դեպքում, երբ հաշվի են առնվում միայն ստոմատոլոգիական միջամտության համար դիմող անձանց հետազոտման արդյունքները: Դրանից խուսափելու համար, խորհուրդ է տրվում անցկացնել բնակչության առանձին խմբերի ընտրովի ուսումնասիրություններ, ստոմատոլոգիական հիվանդացության որոշման համար, իրականացնելով ԱՀԿ-ի 1997թ երաշխավորագրերի պահանջները:

Ուստի, մեր հետազոտման նպատակն է եղել ուսումնասիրել Երևան քաղաքի 3-17 տարեկան երեխաների շրջանում ԱՄԱ-ների նոգոլոգիական տարատեսակների տարածվածության հաճախականությունը:

Հետազոտման խնդիրն է հանդիսացել ներկայացնել ԱՄԱ-ների տարածվածությունը ըստ կծվածքի ձևավորման փուլի և սեռի և ցույց տալ ԱՄԱ-ների

հաճախականության փոփոխությունը տարիքային անցումների ժամանակ:

Նյութը և մեթոդները

Հետազոտության խնդիրները լուծելու նպատակով Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության և Լուսավորության նախարարության կրթության վարչության կողմից տրված համատեղ միջնորդագրի և հատուկ թույլտվության հիման վրա 1998թ.-ի ընթացքում հետազոտվել է Երևան քաղաքի վեց դպրոցների և ութ մանկապարտեզների 3-17 տ., ընդհանուր թվով 4158 երեխա, որը կազմում է ՀՀ-ում բնակվող նշված տարիքի երեխաների ավելի քան 1%-ը, ինչն անհրաժեշտ է համաճարակաբանական հետազոտության արդյունքում ստացված տվյալների հավաստիության համար: Նախադպրոցական տարիքի երեխաների թվաքանակը եղել է 487, դպրոցական տարիքի երեխաներինը՝ 3671:


Մեր կողմից անցկացված վիճակագրական հետազոտությունը կրել է նկարագրական բնույթ, նպատակ ունենալով ուսումնասիրել ԱՄԱ-ների նոգոլոգիական տարատեսակների տարածվածությունը բնակչության որոշակի խմբերում տվյալ ժամանակահատվածում: Հետազոտման ժամանակ կիրառել ենք կլինիկական ախտորոշման ստատիկ եղանակը:

Հետազոտության տվյալները գրանցվել են մեր կողմից առաջարկված հատուկ և զանգվածային հետազոտման թերթիկներում, որոնց մշակման ժամանակ օգտվել ենք ՄՍՄԻ-ի օրոքոդոնտիայի ամբիոնում կիրառվող «ինֆորմացիայի մուտքի քարտից»:

Արդյունքները և դրանց քննարկումը

ԱՄԱ-ներ հանդիպել են 2411 երեխայի մոտ, որը կազմում է մոտավորապես հետազոտվածների 58%:

ԱՄԱ-ների նոգոլոգիական տարատեսակների հաճախականությունը ըստ 1000 հետազոտվածի



պատկերված է գծապատկերում (ինտենսիվ ցուցանիշ):

Կաթնատամային կծվածքի փուլում ԱՇԱ-ների տարածվածությունը կազմել է $34.02 \pm 2.16\%$, խառը կծվածքի փուլում՝ $62.89 \pm 1.14\%$, մշտական կծվածքի փուլում՝ $59.45 \pm 1.13\%$: Մեր հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ԱՇԱ-ների տարած-

վածությունը փոխվում է տարիքի հետ, ցուցանիշները օրինաչափ բարձրացում են խառը կծվածքի և որոշակիորեն իջնում մշտական կծվածքի փուլերում, սակայն մնալով բարձր մակարդակի սահմաններում, ինչը հաստատվում է մալ ալ հեղինակների կողմից [5]:

Աղյուսակ

ԱՇԱ-ների կառուցվածքը ըստ մոզոլոգիական տարատեսակների

ԱՇԱ-ների տարատեսակը	Անոմալիաների թիվը	Էքստենսիվ ցուցանիշ, %
Զն	8	0.33 ± 0.12
Դիրք	380	15.76 ± 0.74
Շկրման ժամկետ	58	2.41 ± 0.31
Քանակ	11	0.46 ± 0.14
Մ/Լ չափեր	30	1.24 ± 0.23
Նեղացում	106	4.40 ± 0.42
Դիաստեմա	409	16.96 ± 0.76
Տրեմա	8	0.33 ± 0.12
Խտություն	585	24.26 ± 0.87
Պրոգնոսիս	419	17.38 ± 0.77
Պրոգնոսիս	40	1.66 ± 0.26
Բաց	72	2.99 ± 0.35
Խորը	64	2.65 ± 0.33
Խաչաձև	221	9.17 ± 0.59
Ընդամենը	2411	100

Ստացված տվյալներից (Աղյուսակ) երևում է, որ առավել տարածված են խտությունը, պրոգնոստիկան, դիատետման, դիրքի անոմալիաները և խաչաձև կծվածքը: Ի դեպ, Pognacco-ի [6] կարծիքով, առավել հաճախ են հանդիպում կծվածքի ուղղահայաց, նետաձիգ և հորիզոնական հարթության խանգարումները:

Հետազոտության իրականացման ընթացքում մենք մանրակրկիտ ուշադրություն ենք դարձրել ԱՇԱ-ների նոգոլոգիական տարատեսակների առանձին և զուգորդված ձևերի հայտնաբերման և գրանցման վրա, որպեսզի կարողանանք առավել լիարժեք ցույց տալ նրանց տարածվածության փոփոխությունը տարիքի հետ, ինչպես նաև հայտնաբերել որոշ ԱՇԱ-ների ինքնակարգավորման հավանականությունը, քանի որ գործնական օրոքորոնտիայի համար առավել կարևոր

նշանակություն ունի ոչ թե ԱՇԱ-ների ընդհանուր թվի փոփոխությունը տարիքի հետ, այլ նրա առանձին ձևերինը [7]:

Այսպիսով, պարզվել է, որ տարիքային փոփոխությունների առավելապես ենթարկվում է դիատետման, խորը կծվածքը, ատամնաշարերի նեղացումը: Բաց և խաչաձև կծվածքների տարածվածությունը քիչ է փոփոխվում տարիքի հետ:

Այսպիսով, Երևան քաղաքում հայտնաբերվել է ԱՇԱ-ների մեծ տարածվածություն մախադայրոցական և դպրոցական տարիքի երեխաների շրջանում, ինչը հիմնավորում է անհապաղ կանխարգելիչ ծրագրերի ստեղծումը և խնդիր է բարձրացնում առողջապահության օրգանների առջև ապահովել ԱՇԱ-ների ճշգրիտ ախտորոշման և բուժման հսկողությունը մասնագիտացված

Поступила 04.05.04

Анализ распространенности зубо-челюстных аномалий у детей г. Еревана

О.М. Оганесян

В статье приводятся данные собственных исследований, проведенных у детей 3–17 лет г.Еревана, с целью определения распространенности зубо-челюстных аномалий по отдельным нозологическим формам.

По данным автора, в молочном прикусе аномалии

встречались с частотой 34,02%, в смешанном – 62,89%, в постоянном прикусе – 62,89%.

Полученный материал является основанием для серьезного профилактического подхода к данной проблеме.

The incidence of malocclusion among the children of Yerevan city

H.M. Hovhanisyan

For the study of the incidence of malocclusion among preschool and school- children we have investigated 4158 children (2020 boys and 2138 girls). The examination has shown a high incidence of malocclusion (about 58%).

Among the primary dentition, the prevalence of mal-

occlusion is about 34.02%, among the mixed-dentition it is 62.89% and the permanent dentition – 59.45%. The results obtained point to the necessity of measures for prophylaxis and timely diagnosis of orthodontic treatment of children with malocclusions.

Գրականություն

1. Образцов Ю.А. Распространенность, патогенез зубо-челюстных аномалий и обоснование методов их профилактики и лечения у детей в регионе Европейского Севера СССР. Автореф. дис... докт. мед. наук., СПб., 1991.
2. Хорошилкина Ф.Я. Устранение функциональных, морфологических и эстетических нарушений при лечении зубо-челюстно-лицевых аномалий Эджуайс техникой. Учеб. пособ. М., 1995, с.182.
3. Хорошилкина Ф.Я., Малыгин Ю.М. Руководство по ортодонтии. М., 1982.
4. Pagnacco A.; Balestro G., Franchini D., Vandelisti W. Mondo Ortodontico, 1990; 15: 695.
5. Emran S., Wisth P.S., Boe O.E. Dent. Oral Epidemiol, 1990 Oct, 18(5), p. 253.
6. Takahashi F., Abe A., Isobe Y., Aizawa Y., Hanada N. Asia Pac. J. Public Health, 1995; 8(2); p. 81.
7. Pagnacco A., Balestro G., Franchini D., Vandelisti W. Mondo Ortodontico, 1990; 15: 695.